

## **Lindon, Otchakovsky-Laurens v France, 2007, Applications nos. 21279/02 and 36448/02, Լինդոն, Օթչակովսկի Լորենսը ընդդեմ Ֆրանսիայի, (Մարդու իրավունքների եվրոպական դատարան)**

Թեման՝ Զրպարտություն

Ենթաթեման՝ փաստերի վերաբերյալ շարադրանք և գնահատողական դատողություններ

Թեսթը՝ անհրաժեշտությունը

Սանկցիան՝ ֆինանսական

Վճիռը՝ արտահայտվելու ազատության իրավունքի խախտում տեղի չի ունեցել

Իրավասությունը՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարան, Ֆրանսիա

### **Գործի փաստական հանգամանքները**

Դիմումատուներ՝ Մեթյու Լինդոնը, Փոլ Օթչակովսկի Լորենսը և Ս. Ջուլյայը Ֆրանսիայի քաղաքացիներ են, որոնք ապրում են Փարիզում: Լինդոնը գրող է, Օթչակովսկի Լորենսը՝ Պ.Օ.Լ. հրատարակող կազմակերպության տնօրենների խորհրդի նախագահն է, իսկ Ջուլյայը *Լիբերասիոն* թերթի խմբագիրն է:

1998թ. Պ.Օ.Լ.-ը նույնիսկ է հրատարակել Լինդոնի հեղինակությամբ՝ «Ժան Մարի Լյո Պենի դատավարությունը» խորագրով: Նույնը պատմում է Սահմանային Ազգային կազմակերպության զինվորի/ *Front National militant*/ դատավարության մասին, որը այլ զինվորների հետ միասին իր կուսակցության ցուցանակները տեղադրելու ընթացքում կատարել է հյուսիս-աֆրիկյան ծագման մի երիտասարդի սառնարյուն սպանություն և ընդունել է, որ դա եղել է ռասիստական բնույթի հանցագործություն: Նույնը հիմնված է իրական փաստերի վրա և հատկապես 1995թ. կատարված սպանությունների վրա՝ Բրահիմ Բուարամի, մի երիտասարդ Մարոկացու սպանության, որին նետել են Սենայի գետը սքինհեդները *Front National*-ի երթի ընթացքում, և Իբրահիմ Ալիի սպանության՝ Կուլմարիի ծագման մի ֆրանսիացի երիտասարդի, որը սպանվել է Մարսելում Սահմանային Ազգային /*Front National* / զինվորների կողմից: Նույնը բարձրացնում է պարոն Լյո Պենի՝ Սահմանային Ազգային կուսակցության նախագահի պատասխանատվության հարցեր, զինվորների կողմից կատարված սպանությունների համար, և Սահմանային Ազգային կազմակերպության դեմ պայքարելու ռազմավարությունների արդյունավետության հարցեր: Նույնիսկ հրապարակումից հետո Լյո Պենը և Սահմանային Ազգային կուսակցությունը զրպարտության գործ են հարուցել Լինդոնի և Օթչակովսկի Լորենսի դեմ: 1999թ. Փարիզի քրեական դատարանը դատապարտեց Օթչակովսկի Լորենսին զրպարտության համար, իսկ Լորենսին՝ հանցակցության համար: Վերջիններիս նկատմամբ տուգանք նշանակվեց և դրվեց վնասի փոխհատուցման պարտավորություն:

Փարիզի դատարանը նույնիսկ հետևյալ չորս հատվածները համարեց զրպատություն.

1. Պարոն Լյո Պենը առաջնորդել է «մարդասպանների հանցախումբ» և որ «մարդիկ կքվեարկեին նաև Ալ Կապոնեի համար»:
2. Սահմանային Ազգային կուսակցությունը բռնություն է կիրառել յուրաքանչյուրի դեմ, ով լքել է կուսակցությունը:

3. Պարոն Լյո Պենի յուրաքանչյուր հայտարարության ետևում «երևում էր մարդկության պատմության ամենավատ գարշանքների ուրվականը»:
4. Որ նա «վամպիր» էր, որը «բարգավաճում էր իր ընտրողների դառնությունից, երբեմն նաև իրենց արյունից, ինչպես որ իր թշնամիների արյունից» և որ նա սուտասան էր, որը զրպատում էր իր ընդդիմադիրներին, որպեսզի իրենից հեռու վանի իրեն ուղղված մեղադրանքները:

1999թ. *Լիբերասիոն*-ը միջնորդություն է հրապարակել, որը ստորագրված է իննսունյոթ ժամանակակից գրողների կողմից՝ որպես բողոք պարոն Լինդոնի և Լորենսի դատապարտման դեմ: Դիմումով քննարկվում էր այն հարցը, թե արդյոք գրքի համապատասխան հատվածները իրոք զրպարող էին և վերարտադրում էր դրանք բառացիորեն: Պարոն Ջուլայի դեմ այնուհետև Լյո Պենի և Սահմանային Ազգային կազմակերպության կողմից հայց է հարուցվում, 2000թ. դատարանի կողմից վերջինս մեղավոր է ճանաչվում զրպարտության մեջ՝ նույնի համապատասխան հատվածները վերարտադրելու համար: Նրա նկատմամբ նշանակվում է տուգանք և դրվում է վնասների փոխհատուցման պարտավորություն:

Լինդոնի և Լորենսի բողոքի հիման վրա Փարիզի վերաքննիչ դատարանը 1-ին, 3-րդ և 4 – րդ պարբերությունների մասով հաստատել է ստորադաս դատարանի վճիռը: Դատարանը պատճառաբանել է իր որոշումը նրանով, որ հեղինակը բավարար չափով իրեն հեռու է պահել միայն մեջբերված երկրորդ պարբերությունում արտահայտված տեսակետներից, մյուս երեք հատվածները հիմնական ստուգման չեն ենթարկվել և բավարար չափով անկողմնակալ չէին ներկայացված: Որոշումը ուժի մեջ է թողնվել նաև վերադաս դատարանի կողմից:

Պարոն Ջուլայի նկատմամբ կայացված վճիռը անփոփոխ է թողնվել Փարիզի վերաքննիչ դատարանի կողմից, որը գտավ, որ դիմումի հեղինակները նպատակ են հետապնդել իրենց աջակցությունը ցույց տալ պարոն Լինդոնին «հաստատումով կրկնելով, առանց քննարկման առարկա դարձնելու, բոլոր այն հատվածները, որոնք դատարանի կողմից ճանաչվել էին որպես զրպարտություն և նույնիսկ առանց հարցի տակ դնելու համապատասխան հատվածների զրպարտչական բնույթը»: Վերադաս դատարանի կողմից բերված բողոքը նույնպես մերժվել է:

Դատարանի վերլուծությունը և եզրակացությունը

## **ՄԻԵԴ-ի վերլուծությունն ու եզրակացությունը**

ՄԻԵԴ-ը գտավ, որ դիմումատուներին դատապարտելը ուներ հստակ իրավական հիմքեր /Մամուլի ազատության մասին օրենք/. Ֆրանսիական դատական նախադեպը հստակեցրել է, որ այդ օրենքը տարածվում է նաև գեղարվեստական ստեղծագործության նկատմամբ, եթե այն առնչվում է անձի պատվին ու արժանապատվությանը: Այնուհետև Դատարանը գտավ, որ նրանց դատապարտելը իրավաչափ նպատակ է հետապնդել, այն է՝ այլոց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու նպատակ:

Գրողի և հրատարակողի վերաբերյալ.

Դատարանը նշեց, որ նրանք, ովքեր ստեղծել կամ տարածել են ստեղծագործություն, օրինակ՝ գրական բնույթի, աջակցել են գաղափարների և կարծիքների փոխանցմանը, ինչը կենսական նշանակություն ունի ժողովրդավարական հասարակության համար: Հետևաբար, դրանից բխում է պետության պարտավորությունը՝ անհիմն չխոչընդոտելու նրանց արտահայտվելու ազատությանը: Այնուամենայնիվ, Լինդոնին և Լորենսին պատասխանատվության ենթարկելը կապված է եղել ոչ թե նովելում բերված փաստարկների հետ, այլ կոնկրետ հատվածների բովանդակության: Դատարանը հիշեցնում է, որ նովելի հեղինակները, այլ ստեղծագործողները և ցանկացած անձ, որն իրականացնում է արտահայտվելու ազատության իրավունք, ունի պարտականություններ և պատասխանատվություն:

Ներպետական դատարանի կարծիքը այն մասին, որ վիճարկվող հատվածները զրպարտող բնույթի էին, չի կարող քննադատվել, համապատասխան պարբերությունների թշնամական բովանդակության և այն հանգամանքի հետևանքով, որ դրանցով մասնավորապես նշվում էին Մահմանային Ազգային կուսակցությունը և նրա ղեկավարը:

Ակնհայտ էր նաև, որ դա հեղինակի օգտին էր, որ վերաքննիչ դատարանը փորձել է տարբերակել այն հատվածները, որտեղ հեղինակը իրեն հեռու է պահել իր ստեղծագործությունում: Արդյունքում, ներպետական դատարանը գտավ, որ չորս հատվածներից մեկը զրպարտող բնույթի չէր:

Վերաքննիչ դատարանի եզրակացությունը այն մասին, որ երեք հատվածները չեն ենթարկվել հիմնական ստուգման, համահունչ է ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի հետ: Պնդումների արդարացվածությունը գնահատելու համար տարբերակում պետք է կատարել փաստերի վերաբերյալ շարադրանքի և գնահատողական դատողությունների միջև: Եթե փաստերի առկայությունը կարելի է ապացուցել, ապա գնահատողական դատողություններն ապացուցելի չեն: Երբ նույնիսկ պնդումը հանդիսանում է գնահատողական դատողություն, պետք է լինեն բավարար փաստական հիմքեր այն պաշտպանելու համար: Ընդհանրապես, կարիք չկա նման տարբերակում կատարելու, երբ խոսքը գնում է նովելի հատվածների մասին: Այնուամենայնիվ, դա տեղին է դառնում, երբ, ինչպես որ այս գործում է, ստեղծագործությունը մաքուր գեղարվեստական ստեղծագործություն չէ, այլ ներակայացնում է իրական փաստեր կամ անձինք: Ընդունելի էր դիմումատուներից պահանջել ցույց տալու, որ զրպարտչական ճանաչված պնդումները ունենին բավարար փաստական հիմքեր, քանի որ դրանք ոչ միայն զուտ գնահատողական դատողություններ էին, այլև փաստերի վերաբերյալ հայտարարություններ: ՄԻԵԴ-ը գտավ, որ վերաքննիչ դատարանը հավասարակոված մոտեցում է ցուցաբերել, և կատարել է փաստերի ողջամիտ գնահատում:

Նկատի ունենալով վիրավորող հատվածների բովանդակությունը, վերաքննիչ դատարանի եզրակացությունը այն մասին, որ դրանք բավարար չափով անկողմնակալ չէին, համահունչ է ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքին:

Ճիշտ է, որ թեև ընդհանուր հետաքրքրություն ունեցող հարցի շուրջ հանրային քննարկմանը մասնակցող անձը պարտավոր է չանցնել սահմանները, որոնք այլոց հեղինակության կամ իրավունքների համար են նախատեսված, նա կարող է որոշակի աստիճանի չափազանցության կամ սադրանքի դիմել կամ ոչ չափավոր հայտարարություններ անել: Ճիշտ է նաև, որ ընդունելի քննադատության

շրջանակները ավելի լայն են քաղաքական գործիչի համար կամ քաղաքական կուսակցության համար, ինչպիսիք են Լյո Պենը և Սահմանային Ազգային կուսակցությունը, ի համեմատություն մասնավոր անձի: Դա հատկապես կիրառելի է դիմումատուի գործով, քանի որ Լյո Պենը, որպես քաղաքական գործիչ, հայտնի էր իր ելույթների թշնամական բնույթով և իր էքստրեմիստական գաղափարներով, ինչի հետևանքով նա մի քանի անգամ դատապարտվել է ռասայական թշնամանք սերմանելու, մարդկության դեմ հանցագործությունները պարզունակեցնելու, չարագործությունները օրինական համարելու, պատերազմական հանցագործությունները արդարացնելու, հանրային անձանց դեմ վիրավորանքներ թույլ տալու և վիրավորող հայտարարություններ անելու համար: Դրա արդյունքում վերջինս ինքն իրեն ենթակա է դարձրել սուր քննադատության և պետք է հատկապես բարձր հանդուրժողականություն ցուցաբերեր այս համատեքստում:

Այնուամենայնիվ, Դատարանը գտնում է, որ վերաքննիչ դատարանը կատարել է փաստերի ողջամիտ գնահատում դիմումատուի գործով, գտնելով, որ անձին համեմատելը «մարդասպանների հանցախմբի առաջնորդի» հետ, պնդելը, որ սպանությունը, նույնիսկ այն, որը կատարվել է մտացածին կերպարի կողմից, «պաշտպանվում» էր իր կողմից, և բնութագրելը նրան որպես «վամպիր, որը բարգավաճում է իր ընտրողների դառնությունից, նաև որոշ դեպքերում իրենց արյունից», թեև նա ոչ թե մասնավոր անձ, այլ քաղաքական գործիչ է, անցնում է թույլատրելի սահմանները նման գործերով:

Համարելով, որ նրանք, ովքեր ներգրավված են քաղաքական պայքարի մեջ, պետք է ցուցաբերեն չափավորության և պատշաճության նվազագույն աստիճան, Դատարանը գտավ նաև, որ համապատասխան հատվածները այնպիսին էին, որ բերում էին բռնության և թշնամանքի, անցնելով այն սահմանները, որոնք հանդուրժելի են քաղաքական դեբատներում, նույնիսկ այն անձի նկատմամբ, ով էքստրեմիստական դիրք էր գրավում քաղաքական կյանքում: Հետևաբար, Դատարանը գտավ, որ դիմումատուներին պատասխանատվության ենթարկելը հիմնված էր «վերաբերելի և բավարար» պատճառների վրա: Նշանակված տուգանքն էլ չափավոր էր: Դատարանը գտավ, որ դիմումատուների նկատմամբ կիրառված միջոցները անհամաչափ չէին հետապնդվող նպատակին և որ դիմումատուի արտահայտվելու ազատության իրավունքին միջամտությունը անհրաժեշտ էր ժողովրդավարական հասարակությունում:

## Թերթի վերաբերյալ

Պարոն Ջուլայը դատապարտվել է, քանի որ *Լիբերասիոնը* տպագրել է նամակ, որը վերարտադրել է հատվածներ նովելից, որոնք պարունակում էին հատկապես լուրջ պնդումներ և վիրավորական արտահայտություններ, և որը ստորագրած անձինք հաստատումով վերարտադրելով այդ հայտարարությունները, մերժել են այդ արտահայտությունների՝ զրպարտչական բնույթը, չնայած Լինդոնի և Լորենսի դեմ կայացված վճիռների: Կոնվենցիայի 10-րդ հոդվածով լրագրողների համար ամրագրված երաշխիքը կիրառվում է պայմանով, որ նրանք գործում են բարեխղճորեն՝ տրամադրելու ճշգրիտ և արժանահավատ տեղեկություններ՝ պահպանելով լրագրողական էթիկայի պահանջները:

Արտահայտվելու ազատությունը նախատեսում է նաև պարտականություններ և պատասխանատվություն, որոնք կիրառել են մամուլի նկատմամբ, նույնիսկ լուրջ

հասարակական մտահոգության հարցերի առնչությամբ: Հատուկ հիմքեր են անհրաժեշտ, որոնք թերթին կարող են ազատել իր սովորական պարտականություններից՝ ստուգելու փաստերի վերաբերյալ հայտարարությունները, որոնք զրպարտում են մասնավոր անձանց:

Նկատի ունենալով տուգանքի և փախհատուցման չափավոր բնույթը, որը պարոն Ջուլայը պետք է վճարեր, համապատասխան պարբերությունների բովանդակությանը և համապատասխան արտահայտությունների պոտենցիալ ազդեցությունը հասարակության վրա, նկատի ունենալով, որ դրանք հրապարակվել են մեծ շրջանառություն ունեցող օրաթերթում, Դատարանը գտավ, որ միջամտությունը համաչափ էր հետապնդվող նպատակին:

**Դատարանը գտավ, որ դիմումատուների նկատմամբ 10-րդ հոդվածի խախտում տեղի չի ունեցել:**